Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-1085[3]-06.10.2016-ՖՎ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-51-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15.5-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր՝ 5-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5) սույն օրենքի 40.1 հոդվածով նախատեսված դեպքերում»:

Հոդված 2. Օրենքի 39-րդ հոդվածում.

1) 1-ին մասի դ) կետում «պահանջի հետ» բառերից հետո լրացնել «բացառությամբ սույն օրենքի 40.1-րդ հոդվածով նախատեսված դեպքերի» բառերով
2) 3-րդ մասը լրացնել նոր ե) կետով հետևյալ բովանդակությամբ.

«ե) սույն օրենքի 40.1 հոդվածով նախատեսված դեպքերում:»:

Հոդված 3. Օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասում «կատարումը:» բառից հետո լրացնել հետևյալ նախադասությունը. «Ֆինանսական գործարքներից և ապահովության պայմանագրերից բխող պարտավորությունների հաշվանցի առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքի 40.1-րդ հոդվածով:»:

Հոդված 4. Օրենքը լրացնել նոր՝ 40.1-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«**Հոդված 40.1.** Ֆինանսական գործարքներից և ապահովության պայմանագրերից բխող պարտավորությունների զուտացումը

1) Սույն օրենքի իմաստով զուտացում է համարվում.

ա) զուտացման համաձայնության ներքո մեկ կամ մի քանի ֆինանսական գործարքներով և ապահովության պայմանագրով վճարման կամ մատակարարման պարտավորության վաղաժամկետ կատարման ենթարկելը կամ վաղաժամկետ դադարեցնելը,

բ) սույն մասի «ա)» կետով նախատեսված յուրաքանչյուր վճարման կամ մատակարարման պարտավորության կատարման այդպիսի դադարեցման կամ վաղաժամկետ կատարում պահանջելու ուժով առաջացած արժեքի, շուկայական արժեքի, լիկվիդացիոն արժեքի կամ այդ պարտավորությունը փոխարինելու արժեքի գնահատումը և հաշվարկը,

գ) սույն մասի «բ)» կետով հաշվարկված կամ գնահատված արժեքների փոխարկումը մեկ արժույթի, և

դ) սույն մասի «բ)» կետով հաշվարկված և «գ)» կետով նույն արժույթի փոխարկված արժեքների զուտ հաշվեկշռի որոշում՝ հաշվանցի կամ այլ միջոցներով:

2) Սույն օրենքի իմաստով զուտացման համաձայնություն է հանդիսանում կողմերի համաձայնությունը, որը՝

ա) նախատեսում է գլխավոր համաձայնագրի շրջանակներում կնքվող մեկ կամ մի քանի ֆինանսական գործարքներից և ապահովության պայմանագրերից բխող վճարման կամ մատակարարման ներկա կամ ապագա իրավունքների կամ պարտավորությունների զուտացման իրավունք,

բ) նախատեսում է զուտացման իրավունք երկու և ավելի գլխավոր համաձայնագրերի միջև,

գ) «ա)» և «բ)» կետերով նախատեսված համաձայնագրերի հետ կապված կամ դրանց մաս կազմող ապահովության համաձայնագիրը:

3) Սույն օրենքի շրջանակներում զուտացման նպատակով ֆինանսական գործարք են համարվում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 252.1-րդ հոդվածով նախատեսված գործարքները:

4) Սույն օրենքի շրջանակներում զուտացման նպատակով ապահովության պայմանագրեր են համարվում սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված պայմանագրերի հետ կապված.

1) հետևյալ ապահովված իրավունքները.

ա. արժեթղթերի և դրամական միջոցների նկատմամբ ապահովված իրավունքը,

բ. երաշխավորությունը և երաշխիքը,

գ. մարժայի և նույնաբնույթ այլ պայմանագիրը,

դ. գրավչության գործիքները,

2) այն գործարքները, որոնց պարտադիր բաղկացուցիչ մաս է կազմում որպես ապահովման միջոց արժեթղթերի կամ դրամական միջոցների նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը, ներառյալ՝ ռեպո գործարքները, արժեթղթերի փոխառության գործարքները, արժեթղթերը գնելու և հետ վաճառելու հետ կապված գործարքները:

5) Սույն օրենքի շրջանակներում թույլատրվում է զուտացման համաձայնության շրջանակներում զուտացման իրականացումը՝ անկախ սույն օրենքի 15.5-րդ և 39-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումներից:

6) Կառավարիչն իրավասու է միակողմանիորեն պահանջելու իրականացնել զուտացումը, եթե զուտացման համաձայնության կողմը՝ պարտատերերի պահանջների բավարարման սառեցման պահից 45 օրվա ընթացքում չի իրականացրել զուտացման համաձայնությամբ կողմին տրված իրավունքները, եթե կողմերի միջև կնքված պայմանագրով այլ ժամկետ նախատեսված չէ:

7) Սույն հոդվածի կանոնները տարածվում են զուտացում նախատեսող համայնությունների և ապահովության պայմանագրերի վրա բացառապես այն մասով, որը վերաբերում է ֆինանսական գործարքներին:

8) Սույն օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա)»,«բ)»,«գ)» և «դ)» կետերով, ինչպես նաև նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված Կառավարչի իրավունքները չեն տարածվում զուտացման համաձայնության շրջանակներում պարտապանից պահված կամ պարտապանի կողմից փոխանցված գումարների կամ ապահովության առարկայի վրա, ինչպես նաև ֆինանսական գործարքների և ապահովության պայմանագրերի վրա:»:

Հոդված 5. Օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «դ)» կետի վերջում վերջակետը փոխարինել ստորակետով և մասը լրացնել «ե)» կետով հետևյալ բովանդակությամբ.

«ե) պարտապանի և պարտատիրոջ միջև զուտացման համաձայնության և/կամ ապահովության պայմանագրերին համաձայն բռնագանձված ապահովության առարկան, եթե միաժամանակ բավարարվել են հետևյալ պայմանները՝

1) զուտացման համաձայնությունը և/կամ ապահովության պայմանագիրը կնքվել է սնանկության դիմում դատարան ներկայացնելուն նախորդած իննսուն օրվա ընթացքում,

2) կնքման պահին պարտապանի համար սնանկությունը կամ սնանկության հնարավորությունը կանխատեսելի էր,

3) այդպիսի զուտացման համաձայնություն և/կամ ապահովության պայմանագիր կնքելը չէր բխում պարտապանի շահերից և հետապնդում էր բացառապես ակտիվները սնանկության գործընթացից դուրս բերելու նպատակ:»:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ամփոփաթերթ

1-ին ընթերցմամբ ընդունված ««Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի և դրա ընդունմամբ պայմանավորված այլ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի

N	Առաջարկության հեղինակը	հոդվածը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկությունը	առաջարկությունը	Առաջարկության վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկի դիրքորոշումը
1	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Խաչատուր Քոքոբելյան (հնչեցվել է բանավոր նիստում՝ քննարկման ժամանակ)	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ եվ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 3-րդ և 6-րդ հոդվածներ	ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածը նախատեսում է գրավ դրված գույքի վրա առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու կարգը... [Հոդվածում] չկա կետ, որը ուղղակիորեն սահմանափակում դնի՝ բացառությամբ, եթե դա այլ տեղում գրավադրված չէ կամ ինչ-որ այլ խնդիր [գոյություն ունի]: Մատնանշեցիք, որ սա...արժեթղթերին է վերաբերում: Սեփականության իրավունքի առումով ... էական չէ, դա բնակարան է, թե 10 անգամ թանկ արժեթուղթ կամ բաժնեմաս, քան առանձնատունը: [Սա] սեփականության իրավունքի	Հոդված 6-ը, որը լրացնում է ածանցյալ ֆինանսական գործարքներից բխող պարտավորության ապահովման համար գրավի արտադատական կարգով բռնագանձումը, լրամշակվել է: Հստակ նախատեսվել է, որ գրավի բռնագանձման առանձնահատուկ ռեժիմը տարածվում է **միայն ածանցյալ ֆինանսական գործարքներից** և ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին համապատասխանող գլխավոր համաձայնագրերի շրջանակում կնքված գործարքներից (ռեպո)

			նկատմամբ զարմանահրաշ երևույթ է, այն սահմանափակում է սեփականության անձեռնմխելիությունը, որը երաշխավորված է Սահմանադրությամբ:	բխող պարտավորությունների ապահովման ժամանակ: Հարկ է նշել, որ լրացմշակված նախագծի դրույթները կիրառվում են այն դեպքում, երբ գրավի առարկա են հանդիսանում ածանցյալ գործքիները և դրամական միջոցները: Հստակեցվել է նաև, որ այս ռեժիմը տարածվում է միայն այն դեպքերի վրա, երբ գործարքի ոչ մի կողմ ֆիզիկական անձ չէ: Հետևաբար խոսքը վերաբերում է միայն ֆինանսական շուկաներում առևտրային գործունեությամբ զբաղվող անձանց գիտակցված գործարքների մասին, որոնց կնքումը պայմանավորված է կողմերի՝ շահույթ ստանալու կամ ռիսկերը հեջավորելու նպատակով: